



Մ ՈՒՐԲ Յ ԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՅԻ



ՅԻՇԱՏԱԿ ԵՈՒՄ ՄԱՐԳԱՐԷԻ

07 ՅՈՒՆԻՍ 2009

Կիրակնօրեայ ընթերցումներ	Էջ 1
Լսելու Մասին	Էջ 2
Նրկու Դիւանարաննու Բժշկութիւնը	Էջ 4
Յիսուս Անդամալոյծ մը կը Բժշկէ	Էջ 6
Ծանուցում	Էջ 8

ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԹԱԳԱԻՈՐՈՒԹԵԱՆՑ ԵՐՐՈՐԴ ԳԻՐԲԷՆ

(18.29-46)

Կէսօրը անցաւ, եւ Բահաղի մարգարէները շարունակեցին իրենց ցնորական կանչը ուտուքը մինչեւ երեկոյեան զոհը մատուցանելու ժամը. բայց ո՛չ մէկ ձայն:

Այն ատեն Եղիա Թեսալացի ըսաւ գարշելի այդ կուռքերու մարգարէներուն.

- Հեռացէ՛ք այլեւս, հիմա ես իմ ողջակէզս պիտի մատուցանեմ:

Եւ անոնք հեռու գացին:

Եղիա ժողովուրդին դառնալով ըսաւ. «Ինծի՛ մօտեցէ՛ք»: Եւ ամբողջ ժողովուրդը անոր մօտեցաւ: Եղիա Տիրոջ կործանած սեղանը վերականգնելու համար տասներկու քարեր առաւ, Յակոբի որդիներէն սերած ցեղերուն թիւին համաձայն, որուն Աստուած խօսած էր ըսելով. “Իսրայէլ պիտի կոչուիս”, այդ քարերով սեղան մը կանգնեց Տիրոջ անունին, եւ անոր շուրջը փոս մը փորեց, թիթեղ մը սերմնցու տանելու խորուրթեամբ: Ապա փայտերը սեղանին վրայ շարեց, զուարակը կտոր-կտոր ընելով փայտերուն վրայ դիզեց եւ հրամայեց.

- Չորս սափոր ջուր բերէ՛ք եւ ողջակէզին ու փայտերուն վրայ թափեցէ՛ք:

Ապա ըսաւ. «Կրկնեցէ՛ք նոյնը»: Եւ անոնք նոյն ձեւով կրկնեցին: «Երրորդ անգամ ըլլալով կրկնեցէ՛ք նոյնը», ըսաւ ան, եւ երրորդ անգամ մըն ալ այնպէս ըրին: Զուրը սեղանին շուրջ հոսեցաւ եւ լեցուց փոսը:

Երբ երեկոյեան զոհը մատուցանելու ժամը հասաւ, Եղիա մարգարէ սեղանին մօտեցաւ եւ աղօթեց աղաղակելով.

- Ո՛վ Տէր, Աբրահամի, Իսահակի եւ Յակոբի

Աստուածը, ցո՛յց տուր այսօր թէ դո՛ւն ես Իսրայէլի Աստուածը եւ ես՝ քու ծառադ, եւ թէ քեզի համար ըրի այս բոլորը: Լսէ՛ ինծի, Տէ՛ր, պատասխանէ՛ ինծի կրակով, որպէսզի այս ժողովուրդը գիտնայ թէ դո՛ւն ես Աստուածը, ո՛վ Տէր, եւ դո՛ւն ես որ ետ քեզի կը դարձնես իրենց սիրտը:

Այն ատեն Տէրը երկինքէն կրակ զրկեց, որ այրեց ողջակէզն ու փայտերը, քարերն ու հողը, եւ լափեց փոսին մէջ հաւաքուած ջուրը: Ասիկա տեսնելով՝ ամբողջ ժողովուրդը երեսի վրայ գետին ինկաւ, ըսելով. «Արդարեւ Տէ՛րն է Աստուածը, Տէ՛րն է Աստուածը»:

Եղիա անոնց հրամայեց. «Բռնեցէ՛ք Բահաղի մարգարէները. ոեւէ մէկը ողջ չմնայ»: Եւ ժողովուրդը բռնեց զանոնք: Եղիա զանոնք Կիսոն կոչուած հեղեղատը իջեցուց եւ հոն կտորեց զանոնք:

Այնուհետեւ Եղիա Աքաաբին ըսաւ. «Գնա՛ հիմա, կե՛ր եւ խմէ՛, որովհետեւ մօտալուտ սաստիկ անձրեւի ձայն կ’առնեմ»: Աքաաբ ուտելու եւ խմելու գնաց, իսկ Եղիան Կարմեղոս լերան գագաթը բարձրացաւ, մինչեւ գետին խոնարհեցաւ ու դէմքը ծունկերուն մէջ առաւ, եւ իր ծառային ըսաւ. «Գնա՛ եւ ծովուն կողմը նայէ՛»: Պատանին գնաց նայեցաւ եւ ըսաւ. «Բան չկայ»:

- Դարձեալ գնա՛, - ըսաւ Եղիա, եւ եօթն անգամ պատանին ետ գնաց: Եօթներորդ անգամին պատանին ըսաւ.

- Ահա մարդու մը ձեռքին չափ փոքրիկ ամպ մը կ’ելլէ ծովէն:

Այն ատեն Եղիա ըսաւ.

- Գնա՛ եւ Ագաաբին ըսէ՛. “Կառքդ լծէ՛ եւ տունդ դարձիր որպէսզի անձրեւի չբռնուիս”:

Շուտով երկինքը ամպերով մթնեցաւ. հով ելաւ եւ սաստիկ անձրեւ սկսաւ: Աքաաբ իր կառքը հեծաւ եւ Յեզրայէլ փութաց: Տիրոջ զօրութիւնը օգնեց Եղիայի, որ պարեգօտը մէջքին ամրացնելով վազեց եւ Աքաաբէն առաջ մտաւ Յեզրայէլ քաղաքի դռնէն:

ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ ՉՈՐՐՈՐԴ ԳԻՐՔԷՆ (2.1-15)

Երբ հասաւ ժամանակը, որ Տէրը մըրիկով երկիրնք պիտի բարձրացնէր Եղիան, Եղիա եւ Եղիսէ Գաղգաղայէն մեկնեցան: Եղիա Եղիսէին ըսաւ.

- Հո՛ւս մնա, Տէրը զիս Բեթէլ կը զրկէ: Եղիսէ պատասխանեց.

- Վկայ ըլլայ ապրող Տէրը. կ'երդնում քու կեանքովդ, թէ պիտի չթողում քեզ:

Բեթէլ եկան: Բեթէլ բնակող մարգարէները խումբով եկան Եղիսէի եւ ըսին.

- Գիտե՞ս, որ Տէրը այսօր քեզմէ պիտի առնէ Եղիան՝ քու տէրդ:

- Գիտեմ, այդ մասին մի՛ խօսիք, - պատասխանեց Եղիսէ:

Ապա Եղիա Եղիսէի ըսաւ.

- Հո՛ւս մնա, Տէրը զիս Երիքով կը զրկէ: Եւ ան պատասխանեց.

- Վկայ ըլլայ ապրող Տէրը. կ'երդնում քու կեանքովդ, թէ պիտի չթողում քեզ:

Եւ Երիքով եկան: Երիքով բնակող մարգարէները խումբով մօտեցան Եղիսէի եւ ըսին.

- Գիտե՞ս, որ Տէրը այսօր քեզմէ պիտի առնէ Եղիան՝ քու տէրդ:

- Գիտեմ, մի՛ խօսիք այդ մասին, - պատասխանեց Եղիսէ:

Եղիա Եղիսէի ըսաւ.

- Հո՛ւս մնա, Տէրը զիս Յորդանան կը զրկէ: Եղիսէ պատասխանեց.

- Վկայ ըլլայ ապրող Տէրը. կ'երդնում քու կեանքովդ, թէ պիտի չթողում քեզ:

Եւ երկուքը միասին գացին: Մարգարէներու խումբէն յիսուն հօգի հետեւեցան անոնց մինչեւ Յորդանան գետ: Եղիա եւ Եղիսէ գետեզրին կանգ առին, իսկ միւսները կանգնեցան քիչ մը հեռու: Եղիա իր վերարկուն հանեց, ծալլեց գայն եւ անով զարկաւ ջուրերուն: Ջուրերը այս ու այն կողմ բաժնուեցան, եւ անոնք երկուքով անցան ցամաք տեղէն: Երբ անցան, Եղիա ըսաւ.

- Եղիսէ՛, քանի դեռ հետդ եմ՝ խնդրէ՛ ինչ որ կրնամ ընել քեզի համար:

- Խնդրե՛մ. մարգարէական հօգիէդ կրկին բաժին թող ժառանգեմ, - պատասխանեց Եղիսէ:

- Դժուար բան խնդրեցիր, - ըսաւ Եղիա, - բայց պիտի ստանաս գայն, եթէ տեսնես իմ երկիրք բարձրացուիլս. այլապէս պիտի չստանաս:

Եւ մինչ խօսելով կ'երթային, ահա յանկարծ հրեղէն ձիերով կառք մը իրարմէ բաժնեց Եղիան ու Եղիսէն, եւ Եղիա մըրիկով երկիրնք բարձրացաւ: Եղիսէ տեսաւ եւ աղաղակեց. «Հա՛յր, հա՛յր, ահա Իսրայէլի կառքն ու հեծեալները»: Եւ այլեւս չտեսաւ գայն: Ուստի քաշեց, պատռեց

իր վերարկուն, գայն երկու կտորի վերածելով: Ապա վերցուց Եղիայի վերարկուն, որ իր վրայ ինկաւ, եւ դարձաւ Յորդանան գետին եզերքը: Առաւ Եղիայի վերարկուն եւ ջուրերուն զարկաւ, բայց անոնք չբաժնուեցան: Այն ատեն գոչեց. «Ո՛ր ես, Տէ՛ր, Եղիայի Աստուածը», եւ դարձեալ ջուրերուն զարկաւ: Ջուրերը այս ու այն կողմ բաժնուեցան եւ Եղիսէ անցաւ միւս կողմ: Երբ Երիքովի մարգարէները դիմացէն տեսան զինք, ըսին. «Եղիայի հօգին Եղիսէի վրայ հանգչեցաւ»: Գացին դիմաւորեցին զինք եւ մինչեւ գետին խոնարհեցան անոր առջեւ:

ՅԱԿՈՒՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԷՆ (5.16-20)

Ձեր մեղքերը իրարու խոստովանեցէք եւ իրարու համար աղօթեցէք, որպէսզի բժշկուիք. որովհետեւ արդարի մը աղօթքը ազդեցիկ է եւ մեծապէս կ'օգնէ: Եղիա մեզի նման կիրքերու ենթակայ մարդ էր. բայց երբ աղօթեց որ անձրեւ չգայ երեքուկէս տարի չանձրեւեց երկրի վրայ: Ապա դարձեալ աղօթեց եւ երկիրքը անձրեւ տեղաց ու երկիրը իր բերքը տուաւ:

Եղբայրներս, երբ ձեզմէ ոեւէ մէկը ճշմարտութեան ուղիէն մոլորի եւ ուրիշ մը յաջողի գայն վերադարձնել, գիտցէք թէ մեղաւորը իր մոլար ճամբէն դարձնողը թէ՛ անոր հօգին մահուանէ կը փրկէ եւ թէ՛ իր բազմաթիւ մեղքերուն թողութիւն կը գտնէ:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ (14.25-30)

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ.- « Ձեզի օրինակներով խօսիմ: Իսրայէլի մէջ բազմաթիւ այրիներ կային Եղիայի օրերուն, երբ երեքուկէս տարի երկիրքը չանձրեւեց եւ ամբողջ երկրին մէջ սաստիկ սով տիրեց: Բայց Եղիա անոնցմէ ոեւէ մէկուն չղրկուեցաւ, այլ զրկուեցաւ Սիդոնի մօտիկ Սարեփթա գիւղը բնակող այրի կնոջ մը: Նոյնպէս, Եղիսէ մարգարէի օրերուն Իսրայէլի մէջ բազմաթիւ բորոտներ կային, բայց անոնցմէ ոչ մէկը բժշկուեցաւ, այլ միայն Նէեման անունով ասորի մը»:

Այս ակնարկութիւնները լսելով՝ ժողովարանին մէջ գտնուողները բարկութեամբ լեցուեցան: Ելան, Յիսուսը քաղաքէն դուրս հանեցին եւ գահավէժ ընելու նպատակով գայն տարին մինչեւ կատարը այն լեռան, որուն վրայ շինուած էր իրենց քաղաքը: Բայց Յիսուս անոնց մէջէն անցաւ գնաց:

ԼՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԱՌՆԻԿ Ք.Գ.

Առիթով մը Յիսուս ըսած է. «Ականջ ունեցողը թող լսէ»: Այս խօսքը կը գտնենք թէ՛ Մարկոսի աւետարանին (4.9) եւ թէ՛ Ղուկասի աւետարանին (8.8) մէջ: Յիսուս ասիկա ըսած է Սերմնացանի առակին վերջաւորութեան, որպէս կնքիչ պատգամ: Նշեմ, որ Մատթէոս աւետարանիչ Սերմնացանի առակը «Ականջ ունեցողը թող լսէ» խօսքով չէ վերջացուցած:

Նախ եւ առաջ, ի՞նչ ըսել է՝ «Ականջ ունեցողը թող լսէ»: Ո՞վ է որ ականջ չունի: Բայց ի՞նչ տեսակ ականջի մասին է խօսքը:

Ամէն մարդ ալ ականջ ունի եւ կը լսէ: Պարզ է, որ Յիսուս չէր ակնարկէր մարմնի ծանօթ գործարանին: Ամէն մարդ ալ մարմնական ականջ ունի եւ գրեթէ ամէն մարդ ալ կը լսէ: Յիսուսի ակնարկած ականջը՝ ուրիշ ականջ է: Հիմա տեսնենք, թէ ի՞նչ ականջի կը վերաբերի «Ականջ ունեցողը թող լսէ» պատգամը:

Բ. Օրէնքի գիրքին մէջ կը կարդանք. «Բայց Տէրը մինչեւ այսօր չտուաւ ձեզի այնպիսի սիրտ մը, որ իմանաք եւ ո՛չ աչքեր, որ տեսնէք, ո՛չ ալ ականջներ, որ լսէք» (Բ. Օր 29.4): Ուրեմն, Տէրն է կամ Աստուած ինքն է, որ իմանալու, տեսնելու եւ լսելու շնորհքները կու տայ: Այդ շնորհքները մարդկային մարմնին մաս չեն կազմեր, այլ վերէն կը տրուին: Կ'ըսէ՝ «Տէրը մինչեւ այսօր չտուաւ»: Ե՞րբ է «այսօր» ըսուածը:

Քառասունամեայ անապատային պատրաստութեան աւարտին, Աստուած Մովսէս մարգարէին «ուխտի խօսքեր» կը փոխանցէ Մովսէսի երկրին մէջ, նախքան Իսրայէլի որդիներուն մուտքը «կաթ ու մեղր բլրոց երկիրը»՝ Քանան: Եւ մարգարէն զանոնք կանչելով ուխտի խօսքերը պահել ու կատարել կը պատուիրէ (Բ. Օր 29.9): Հետեւաբար, ուխտի խօսքերը պահելուն եւ գործադրելու օրուան կապուած են իմանալու, տեսնելու եւ լսելու շնորհքները: Անոնք կը բխին ուխտի պահպանութեան եւ գործադրութեան ժամանակին մէջ:

Հաւանաբար, Աստուծոյ ընտրած ժողովուրդը կամ անհատը կ'իմանան, կը տեսնեն եւ կը լսեն՝ երբ աստուածային ուխտը կը պահպանեն եւ կը գործադրեն:

Արդ, ըստ Հին Կտակարանին, ականջ ունին անոնք՝ որ Աստուծոյ հաստատած ուխտին հնազանդ են: Ականջ ունեցողը «արծաթի պէս» իմաստութիւն կը փնտռէ (Առ 2.4): Անոր համար իմաստութիւնը ամենօրեայ պէտք մըն է, ինչպէս դրամ վաստակիլը անհրաժեշտ է մեր զանազան կարիքները հոգալու համար:

Իմաստութեան փնտռտութիւն սկիզբը, կ'ըսէ Առակներու գիրքը, Աստուծոյ երկիւղն է: Երկիւղին հոմանիշը՝ վախն է: Սակայն անիկա սարսափի զգացումին հետ կապ չունի, այլ այն զգացումին, որ մեզ պաշտամունքային ծնրադրումով կը խոնարհեցնէ Աստուծոյ:

Աստուծոյ առջեւ ինքզինք խոնարհեցնելը ձեւ չէ, այլ սեփական անձին ամբողջապէս յանձնուելը Աստուծոյ: Այս յանձնուելը ինքզինք դնել է հոն՝ ուր Աստուծոյ իմաստութիւնը կը լսուի, որովհետեւ ան որ ինքզինք կը խոնարհեցնէ՝ ականջը իմաստութեան կու տայ, եւ իմաստութիւնը Աստուծոյ բերնէն է (համա Առ 4.6):

Աստուծոյ բերանը այսպէս կը բարբառի. «Ուշադրութեամբ ինծի մտիկ ըրէ՛ք, որպէսզի բարիքներ ուտէք ու ձեր հոգին պարարտութեամբ զուարճանայ: Ձեր ականջը խոնարհեցուցէք ու ինծի եկէ՛ք. մտիկ ըրէ՛ք ու ձեր հոգին պիտի ապրի (Յս 55.2-3): Ուրեմն, Աստուծոյ իմաստութեան ունկնդիր ըլլալը հոգին «կը պարարտացնէ»: Մինչ մարմնին պարարտացումը մահուան պատճառ է, հոգիին պարարտացումը՝ զայն կ'ապրեցնէ:

Ականջը խոնարհեցնել, կ'ըսէ Աստուած: Ի՞նչ ըսել կ'ուզէ:

Երեմիա մարգարէին միջոցով Ան ըսած է. «...անոնց ականջները անթլփատ են եւ չեն կրնար մտիկ ընել: Ահա Տիրոջ խօսքը անոնց առջեւ անարգուեցաւ» (Եր 6.10): Արդ, ականջը խոնարհեցնելը եւ «թլփատուած» ականջ ունենալը նոյն բանը կ'ըսեն: Իր ականջը խոնարհեցնողը՝ «թլփատուած» ականջ ունեցողն է, որ մտիկ կ'ընէ Աստուծոյ խօսքը, զայն չ'անարգեր:

Իսկ ի՞նչ կը նշանակէ «թլփատուած» ականջ ունենալ: Ինչի՞նչ խորհրդանշան էր թլփատութիւնը:

Ծնունդներու գիրքին մէջ կը պատմուի, թէ Աստուած Աբրամի կ'երեւնայ եւ կ'ըսէ. «Յս եմ ամենակարող Աստուածը. իմ առջեւ քայլ՝ ու կատարեալ եղի՛ր: Եւ իմ ու քու միջեւ ուխտ պիտի ընեմ»: Ապա՝ «Ահա իմ ուխտս քեզի հետ է: Ազգերու բազմութեան հայր պիտի ըլլաս: Ու այսուհետեւ քու անունդ Աբրամ չէ, այլ՝ Աբրահամ. վասնզի քեզ ազգերու բազմութեան հայր ըրի: ...Իմ եւ քու միջեւ եւ քու սերունդիդ միջեւ եւ իրենց ազգերուն միջեւ ուխտս պիտի հաստատեմ: Յաւիտեանական ուխտ մը, որ քեզի ու քեզմէ ետքը քու սերունդիդ Աստուած պիտի ըլլամ»: Նաեւ թէ՛ «Այս է իմ ու ձեր միջեւ եւ քեզմէ ետքը քու սերունդիդ միջեւ եղած իմ ուխտս՝ որ պիտի պահէք: Ձեզմէ ամէն արուն պէտք է թլփատուի եւ այլն եւ այլն»: Վերջապէս՝ «Եւ անթլփատ արուն, որուն անթլփատութեան մարմինը չէ թլփատուած, այն անձը իր ժողովուրդէն պիտի կորսուի, որովհետեւ ան իմ ուխտս անարգած պիտի ըլլայ» (Ծն 17.1-2, 4-5, 7, 10-13, 14):

Այս մէջբերումը յստակ կը դարձնէ, թէ թլփատութիւնը խորհրդանշական արարք մըն է: Անիկա մարմնամասի մը հատուկ անդին բանի մը կը վերաբերի: Այդ բանն է՝ զԱստուած խոստովանիլ իբր Ամենակարող Տէր, եւ քայլել անոր առջեւ, այսինքն՝ ինքզինք դնել կատարեալ ըլլալու ճամբուն մէջ: Պօղոս առաքեալի բացատրութեամբ՝ ընթանալ Նահապետին առ Աստուած ունեցած «նոյն հաւատքին հետքերով» (Հռ 4.12):

Ուրեմն, «թլփատուած» ականջ ունենալ կը նշանակէ զԱստուած իբր Ամենակարող Տէր խոստովանիլ եւ ըստ Աստուծոյ պատուիրաններուն կեանքը ապրիլ:

ՄԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԵՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

ՀԵՌՈՒԱՍ՝ ԶԱՐԵՀ ԱՐՔ. ԱԶՆԱԲՈՐԵԱՆ
ԽԱՐԱԳԻՐ ԳԱՌԱԿ Ք. Գ.

Լսողական այդ «գործիք»ը, սակայն, կը բացուի Աստուծոյ իսկ կողմէ: Եսայի մարգարէն գրած է. «Ամէն առտու զիս կ'արթնցնէ. Ա'ն իմ ականջս կը բանայ, որպէսզի աշակերտներու պէս լսեմ» (Ես 50.4): Ասիկա ըսել է, թէ հաւատաւոր եւ սրբութեամբ ապրող մարդը կոչուած է իր ճամբան քայելու: Այդ ընթացքը՝ պատրաստ ըլլալու ընթացքն է: Աստուծոյ խօսքը կը լսէ ան՝ որ պատրաստ է: Աստուած կը բանայ անոր ականջը՝ որ պատրաստ է աշակերտներու պէս լսելու:

Երբ «Ականջ ունեցողը թող լսէ», կ'ըսէ Յիսուս, ըսել կ'ուզէ, թէ ան որ պատրաստ է աշակերտներու՝ պէս լսելու՝ կը լսէ, որովհետեւ Աստուած անոր ականջը կը բանայ:

Կարելորդ, ուրեմն, պատրաստ ըլլալն է: Բայց ոչ թէ լսելու մարմնով, այլ պարզապէս՝ առ Աստուած վստահութեան համար:

Յովհաննէսի աւետարանին մէջ կը նկարագրուի, թէ իր առաջին աշակերտները ընտրած ատեն, Յիսուս Նաթանայէլի հանդիպելով, կ'ըսէ. «Ահա ես քեզ ճշմարիտ Իսրայէլացի մը, որուն մէջ նենգութիւն չկայ»: Նաթանայէլ կը հարցնէ. «Ուրկէ՞ կը ճանչնաս զիս»: Յիսուս կը պատասխանէ. «...տեսայ քեզ, երբ թղենիին տակն էիր» (ՅՆ 1.47-48): Թղենին խորհրդանշանն է աստուածային իմաստութեան մէջ կրթութեան: Նաթանայէլի հոգեւոր աշխարհը կրթուած էր եւ կը կրթուէր աստուածային իմաստութեան մէջ: Ան պատրաստ էր Յիսուսի կողմէ ընտրուելու, թէեւ ինք չէր գիտեր:

Աստուած ինք կ'ընտրէ եւ կը խօսի անոնց՝ որոնք պատրաստ են:

Կրնայ ենթական նոյնիսկ ընդդիմամարտութեան մէջ ըլլալ, բայց ենթագիտակցաբար պատրաստուած կ'ըլլայ լսելու աստուածային խօսքը եւ հետեւելու անոր: Այդպէս՝ չէր պարագան Սողոմի, որ Դամասկոսի ճամբուն վրայ Յիսուսի ձայնը լսեց (Գրծ 9.3-6):

Ականջ ունեցողին Աստուած կ'արթնցնէ, անոր ականջը կը բանայ եւ կը խօսի: Իսկ ան ալ հնազանդութեամբ մտիկ կ'ընէ, որպէսզի օգնէ «յոզնած»ին (Հմմտ Ես 50.4-5), այսինքն՝ բոլոր անոնց՝ որոնք միջնորդութեան կարօտ «արդարութեան հետեւողներ»ն են կամ «Տէրը փնտրողներ»ն են:

Ականջ տոկողը՝ Աստուած է: Ականջ բացողը՝ Աստուած է: Խօսողը՝ Աստուած է:

Լսողը՝ ականջ ունեցողն է: Մտիկ ընողը՝ ականջը խոնարհեցնողն է: Կանչուողը՝ Հօրմէն սորվողն է (ՅՆ 6.45):

Հուսկ ըսեմ, որ ականջ ունենալը չի վերաբերիր միայն Աստուծոյ խօսքին ձայնաւոր լսողութեան, այլեւ՝ Աստուծոյ արդէն յայտնեալ խօսքի լսողութեան եւ անոր հնազանդութեան: Ինչպէս կարելի է գիտնալ, թէ մէկը Աստուծոյ խօսքը (թէ՛ ձայնաւոր եւ թէ՛ յայտնեալ) լսող ականջ ունի, կամ կը հնազանդի այդ խօսքին:

Յիսուս կ'ըսէ, թէ անիկա կը նմանի այն սերմին, որ բազմապատիկ պտուղ կու տայ (տե՛ս Սերմնացանին առակը):

Ճշմարիտ լսողութիւնը՝ պտղաբեր է:

ԵՐԿՐՈՒ ԴՈՒՍԱՐԱՆՈՒ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ (28-34):

«Յիսուս երբ լինի միւս կողմը՝ Գերգեսացիներու երկիրը եկաւ, դէմը ելան երկու դիւահարներ, որոնք ժայռափոր գերեզմաններէն եկած էին: Ասոնք այնքան կատաղի էին, որ ոեւէ մէկը այդ ճամբայէն չէր համարձակեր անցնիլ: Ասոնք աղաղակեցին՝ ըսելով.

- Ի՞նչ կ'ուզես մեզմէ, Յիսուս, Աստուծո՛յ Որդի, եկար որ ժամանակէն առաջ տանջես մեզ:

Քիչ մը հեռուն խոզերու մեծ երամակ մը կ'արածէր: Չար ոգիները Յիսուսի կ'աղաղակէին, ըսելով.

- Եթէ մեզ դուրս պիտի հանես, բո՛լլ տուր որ խոզերու երամակին երթանք:

Յիսուս ըսաւ.

- Գացէ՛ք:

Եւ չար ոգիները դիւահարներէն ելլելով՝ գացին խոզերուն. եւ ահա խոզերու ամբողջ երամակը գառիթափէն վար դէպի լին խուժեց եւ հոն խեղդուեցաւ:

Խոզարածները փախան եւ փաղաք երթալով պատմեցին եղածը, նաեւ ինչ որ պատահած էր դիւահարներուն: Քաղաքի ամբողջ բնակիչները ընդառաջ ելան Յիսուսի եւ երբ գայն տեսան, աղաչեցին որ հեռանայ իրենց սահմաններէն»:

Բնութեան վրայ Յիսուսի հեղինակութիւնը ցոյց տալէ ետք, աւետարանիչը կ'անցնի այս դրուագին, որ մեզի կը ներկայացնէ երկու կատաղի դիւահարներու բժշկութիւնը: Հետեւաբար, այս անգամ ան ցոյց կու տայ Յիսուսի հեղինակութիւնը ոգիներու աշխարհին վրայ:

Նոյն դրուագը Մարկոսի աւետարանին մէջ ալ կայ: Այնտեղ սակայն մէկ դիւահարի բժշկութեան կը վերաբերի դրուագը (Մկ 5.1-20), իսկ այստեղ՝ երկու: Մարկոսի աւետարանին մէջ, աւելի առաջ կայ ուրիշ դիւահարի մը բժշկութիւնը (Մկ 1.21-28): Հաւանաբար Մատթէոս աւետարանիչ Մարկոսեան երկու դրուագները մէկ անգամէն ուզած է պատմել:

Այն երկրամասը, որուն մասին կը խօսի, այսինքն՝ Գերգեսացիներու երկիրը, կը գտնուէր Գալիլիայի լիճին արեւելեան ափին, Դեկապոլիս կոչուած նահանգին մէջ: Դեկապոլիս կը նշանակէ տասը քաղաքներ: Տասը քաղաքները Յիսուսէ երկու դար առաջ հիմնադրուած էին եւ թէեւ մաս կը կազմէին Պաղեստինին, բայց բնակչութիւնը մեծամասնութեամբ հեթանոս էր: Անոնք յոյն եւ լատին էին: Նահանգը տիրապետուած էր յունական եւ լատինական մշակոյթներով:

Հազիւ Գերգեսա քաղաքին կը մօտենայ Յիսուս, երկու դիւահարներ գերեզմաններէն ելլելով

իրեն կը հանդիպին: Դիւահարներուն կատաղի եւ անգոսպելի ըլլալուն մասին Մատթէոս գրեթէ բան չէ գրած: Մարկոս Գերգեսացի դիւահարի բժշկութեան առիթով աւելի մանրամասն կը նկարագրէ: Ըստ Մարկոսի, դիւահարը այնքան կատաղի էր, որ «նոյնիսկ շղթաներով չէին կրնար գինք կապել: Շատ անգամ անոր ոտքերն ու ձեռքերը շղթաներով կապած էին, բայց անիկա խորտակեր էր շղթաները եւ կտրտեր ոտնակապերը», եւ թէ՛ «Ոչ ոք կրնար գինք գոսպել» (Մկ 5.3-5): Նման պարագաներ քաղաքի մէջ չէին կրնար մնալ: Անոնք քաղաքներէն դուրս դրուած կ'ըլլային եւ կ'ապրէին ամալի վայրերու մէջ:

Այստեղ ժայռափոր գերեզմաններու ակնարկութիւն կ'ըլլայ: Ժամանակին գերեզմանները հողի մէջ չէին ըլլար, այլ քարայրներ կ'ըլլային, որոնց մուտքն ալ ժայռով մը կը գոցէին: Ուստի, շատ բնական է, որ քաղաքներէն դուրս դրուողներ՝ քարայր-գերեզմաններու մէջ պատասպարուէին:

Դիւահարները կ'աղաղակեն, ըսելով. «Ի՞նչ կ'ուզես մեզմէ, Յիսուս, Աստուծո՞յ Որդի, եկար որ ժամանակէն առաջ տանջե՞ս մեզ»: Այս հարցումին մէջ մեր ուշադրութիւնը գրաւող առաջին արտայայտութիւնը՝ Յիսուսի տրուած Աստուծոյ Որդի կոչումն է:

Հետաքրքրական է ասիկա: Յիսուս այլ բժշկութիւններ ալ ըրաւ, ինչպէս տեսանք եւ պիտի տեսնենք, որոնց մէջ ոչ մէկ բժշկուող Յիսուսի չգիմեց՝ զայն Աստուծոյ Որդի կոչելով:

Չար ոգիները Յիսուսի ինքնութեան մասին շատ աւելի լաւ գիտեն քան առաքեալները կամ Յիսուսը շրջապատող բազմութիւնները: Պարզապէս, ինչպէս կարգ մը մեկնիչներ կ'ըսեն, անոնք ունին գիտութիւն մը, որ մարդկայինէն գերիվեր գիտութիւն է եւ կը ճանչնան ան՝ որ Տէրն է եւ որուն դէմ ըմբոստացան: Անոնք նաեւ գիտեն, թէ գիրենք սպասող դատապարտութիւն մը կայ եւ սահմանուած տանջանք մը կայ:

Տանջանքին առնչութեամբ: Վերջին Դատաստանի մասին խօսած ատեն, Յիսուս ըսած է. «Երբ Մարդու Որդին իր փառքով գայ՝ բոլոր հրեշտակներուն հետ, պիտի նստի իր թագաւորական գահին վրայ: Բոլոր ազգերը պիտի հաւաքուին իր դիմաց եւ ինք մարդիկը իրարմէ պիտի գատէ, ինչպէս որ հովիւը ոչխարները այծերէն կը գատէ: Ոչխարները պիտի կանգնեցնէ իր աջ կողմը, իսկ այծերը՝ ձախ կողմը: Յետոյ թագաւորը իր աջ կողմը կեցողներուն պիտի ըսէ. եկէ՛ք, Հօրս կողմէ օրհնեալներ, եւ ժառանգեցէ՛ք այն արքայութիւնը, որ ձեզի համար աշխարհի սկիզբէն պատրաստուած է: ...Ապա իր ձախ կողմը կեցողներուն պիտի ըսէ. Անիծեալներ, հեռացէ՛ք ինձմէ, գացէ՛ք յալիտեմակա կրակին մէջ, որ Սատանային եւ անոր հրեշտակներուն

համար պատրաստուած է» (Մտ 25.31-34, 41): Այս դատապարտութիւնը ոգիները գիտէին: Եւ այդ պատճառով ալ, այս առիթով դեւերը կ'ըսեն. «Եկար որ ժամանակէն առաջ տանջես մեզ»: Աստուած իր ծրագրին մէջ որոշած է Քրիստոսի Երկրորդ Գալուստին կատարել այդ դատաստանը:

Աստուծոյ ծրագիրը երբեք ալ փոփոխութեան չ'ենթարկեր Յիսուս: Դիւահարներուն բժշկութիւնը դեւերուն վախճանական դատապարտութիւնը չէ: Դեւերը իրենք ալ գիտէին ատիկա: Եւ այդ պատճառով ալ կ'ըսեն. «Եթէ մեզ դուրս պիտի հանես, թոյլ տուր որ խոգերու երամակին երթանք»:

Այս բաժինը ամենէն տարօրինակներէն մէկն է: Տարօրինակ այն իմաստով, որ նոյնիսկ լաւագոյն մեկնութիւններուն մէջ կը գտնէք հարցական մը. թէ ինչո՞ւ այս դեւերը խնդրեցին խոգերուն մէջ երթալ եւ ինչո՞ւ Յիսուս արտօնեց, որ անոնք խոգերուն մէջ երթան:

Երբ չար ոգիները խոգերուն մէջ կ'երթան, խոգերը զառիթափէն վար դէպի լիճ կը խուժեն եւ հոն կը խեղդուին:

Նիւթական մեծ վնաս մըն էր ասիկա, թէ՛ խոգատէր քաղաքացիներուն համար եւ թէ՛ անոնց ծառայող խոգարածներուն:

Մատթէոսի մօտ դրուագը ժխտականօրէն կը վերջանայ: Մարկոսի մօտ դրական է Գերգեսացի դիւահարի բժշկութեան վերջաւորութիւնը: Հոն կը պատմուի, թէ բժշկուած անձը Յիսուսի հետեւիլ կը խնդրէ: Մինչդեռ այստեղ դրուագը կը վերջանայ քաղաքի ամբողջ բնակիչներուն աղաչանքով: Անոնք կ'ուզեն, որ Յիսուս հեռանայ իրենց սահմաններէն: Թէ ինչո՞ւ կ'աղաչէին: Որովհետեւ վախ մը պատած էր գիրենք: Եւ այդ վախը երկու պատճառ ունէր. մէյ մը այն զօրութիւնը, որ դիւահարը բժշկած էր. եւ երկրորդ, հաւանաբար՝ չէին ուզեր դարձեալ նիւթական վնասի ենթարկուիլ: Խոգերու երամակին խեղդուիլը՝ իրենց մէջ վախ ձգած էր, որ Յիսուսի ներկայութիւնը քաղաքին մէջ՝ բազմաթիւ ուրիշ նման վնասներու պատճառ կրնար ըլլալ:

Այս դրուագը ինքնին հիմնական նպատակ մը ունի. Յիսուսը ներկայացնել իբր այն զօրեղ անձը, որուն կ'ենթարկուի նաեւ ոգեղէն աշխարհը: Բայց այս դրուագը ի՞նչ կ'ըսէ:

Ամէն անգամ որ այս դրուագը կը կարդանք, ինչի՞ մասին կը խորհինք:

Նոր աշխարհին մէջ ոմանք կան, որ կ'ընդունին դեւերուն գոյութիւնը:

Անոնք որ Աստուածաշունչը կը ճանչնան եւ անոր հեղինակութիւնը չեն մերժեր՝ անպայման դեւերու գոյութեան կը հաւատան: Այդ հաւատքը՝ անխուսափելի եզրակացութիւն է անոնց համար: Անոնք որ Յիսուսի դիւահար բժշկութիւնները կը

կարգան եւ զանոնք խարդախութիւն չեն համարեր, կամ՝ ժողովուրդին աչքին խաբեբայութիւն, ապա կը տեսնեն, թէ մեր իրականութեան ետին կայ ուրիշ խորունկ աշխարհ մը, որ անկարելի է հերքել: Քանի մենք կը հաւատանք հրեշտակներու գոյութեան, ուրեմն կան թէ՛ բարի հրեշտակներ եւ թէ՛ չար հրեշտակներ: Դեւերը չար հրեշտակներ են: Անոնք Սատանային գլխաւորութեամբ ըմբոստացան Աստուծոյ դէմ եւ կազմեցին անկեալ ոգեղէն աշխարհը:

Աստուծոյ կողմէ ոգեղէն աշխարհի մը ստեղծումը լայնօրէն կը հաստատուի Հին Կտակարանին մէջ. եւ ոչ թէ անցողակի կերպով, այլ իբր ամենէն կարեւոր աստուածաբանական հաստատումներէն մէկը: Որեւէ լուրջ քննող կամ մեկնիչ կամ ընթերցող անկարելի է, որ կարենայ անտեսել զանկա կամ ոստում ընելով անոր վրայէն անցնիլ:

Ներկայ աշխարհին մէջ կայ երկրորդ մօտեցում մը: Շատ մը ժամանակակից մեկնիչներ, այսօրուան աշխարհին այսպէս կոչուած գիտականութենէն բռնուած, կը մերժեն այս ոգեղէն աշխարհը՝ երկու տեսակ բացատրութիւն տալով:

Նախ ըսելով, որ ոգեղէն աշխարհի մասին Աստուծաշունչի նիւթերը հին ժամանակի մարդոց մտայնութեան արտայայտութիւններ են: Բոլորն ալ, սակայն, այս դժուարութեան առջեւ կը կենան:

Եթէ ատոնք այն օրերու մտայնութեան արտայայտութիւններ էին, ինչո՞ւ Յիսուս չուզեց իր կարգին ժխտել ոգեկան աշխարհին իրականութիւնը, ինք որ ամէն ճշմարտութիւն յայտնելու եկած էր: Ինչո՞ւ ինք պիտի ուզէր, որ իր հետեւորդները մնային նոյն մոլորութեան մէջ կամ հաւատային բաներու, որոնք գոյութիւն չունին:

Երկրորդ բացատրութիւնը, որ ժամանակակից աշխարհը կը փորձէ տալ խոստացիւցող համար որոշ դժուարութիւններէ, Աստուածաշունչին դիւահարութիւն կոչածը կը ներկայացնէ իբր հոգեբանական երեւոյթ: Շատերու համար այսօր ամենէն դիւրին բացատրութիւններէն մէկն է ասիկա: Բայց հետեւեալը ըսենք: Երբեմն կրնայ ըլլալ, որ Աստուածաշունչական ժամանակի մարդոց մտածողութեան մէջ շատ մը հիւանդութիւններ, որոնք անպայման դիւահարութիւն չէին, այդպէս կոչուէին: Ասիկա չի նշանակեր, թէ դիւահարութիւնը չկար: Այսօր ալ դիւահարներ կան եւ բազմատեսակ դիւահարներ կան: Ոգեղէն աշխարհը գոյութիւն ունի: Հետեւաբար գոյութիւն ունին թէ՛ բարի եւ թէ՛ չար ոգիներ:

ՅԻՍՈՒ ԱՆՊԱՄԱՂՈԾ ՄԵ ԿԵ ԲԺՇԿԷ (9.1-7):

«Յիսուս նաւակ մտաւ եւ լիմնի միւս կողմը անցնելով եկաւ իր քաղաքը: Եւ ահա մարդիկ իրեն բերին անդամալոյծ մը, մահիմնի մէջ պառկած: Յիսուս անոնց հաւատքը տեսնելով, ըսաւ անդամալոյծին.

- Քաջալերուէ՛, ո՛րդեակ, մեղքերդ ներուած են քեզի:

Օրէնքի ուսուցիչներէն ոմանք իրենց մտէն ըսին.

- Այս մարդուն ըրածը հայոյութիւն է:

Յիսուս գիտցաւ անոնց մտածումը եւ ըսաւ.

- Ինչո՞ւ դուք մեզի չար բաներ կը մտածէք: Ո՞ր մէկը անլի դիւրին է. անդամալոյծին՝ Մեղքերդ ներուած են քեզի ըսելը, թէ՛ ել եւ քալ՝ ըսելը: Բայց պէտք է գիտնալ, թէ Մարդու Որդին երկրի վրայ իշխանութիւն ունի մեղքերը ներելու:

Ապա անդամալոյծին դառնալով ըսաւ.

- Ե՛լ, մահիմն ա՛ն եւ տունդ գնա:

Անդամալոյծը ոտքի ելաւ եւ տուն գնաց: Ժողովուրդը երբ ասիկա տեսաւ՝ զարմացաւ ու կը փառաւորէր զԱստուած, որ մարդոց այսպիսի կարողութիւն կու տայ:»

«Եկաւ իր քաղաքը»: Աւետարանները համեմատելով, կը տեսնենք, որ այդ «իր»ը ակնարկութիւն է Կափառնաուսի: Յիսուս այնտեղ հաստատուած էր եւ տուն մըն ալ ունէր, ինչպէս Մարկոսի ավետարանին երկրորդ գլուխէն կը տեղեկանանք (Մկ 2.1):

Մարդիկ իրեն կը բերեն անդամալոյծ մը:

Մարկոս կը տեղեկացնէ, թէ բերողները չորս հոգի էին (Մկ 2.3):

Երբ տան կը մօտենան, զայն խճողուած կը գտնեն: Ուստի, կ'որոշեն տանիքը բարձրանալ, գերանները քակել եւ անդամալոյծը Յիսուսի առջեւ իջեցնել: Յիսուս երբ տեսաւ անոնց հաւատքի բացառիկ արտայայտութիւնը, դարձաւ անդամալոյծին եւ այսպէս ըսաւ. «Քաջալերուէ՛, ո՛րդեակ, մեղքերդ ներուած են քեզի»:

Շատ մը դրուագներու մէջ, երբ Յիսուս կը բժշկէ՝ ենթակային հաւատքը կը փնտռէ: Կ'ուզէ գիտնալ, թէ բժշկութեան եկած անձը ինք կը հաւատա՞յ: Այս պարագային, ենթակային կողմէ ոչ մէկ արտայայտութիւն կատարուած է: Եւ Յիսուս ալ որեւէ հարցում չէ ուղղած անոր: Ան բժշկութիւնը կը գործէ՝ բերողներուն հաւատքին վրայ:

Հետաքրքրական է, որ Յիսուս անդամալոյծին ուղղած իր խօսքին մէջ, փոխանակ բժշկութեան մասին խօսելու, ներումի մասին կը խօսի: Եւ ասիկա մեզ կը զարմացնէ: Մարդիկը ուրիշ բանի մը համար կը դիմեն իրեն, բայց ինք այլ բանի մը մասին կը խօսի: Սակայն այստեղ կարեւոր է դիտել Յիսուսի ըսելու կերպը: Ան նախ կը դառնայ հիւանդին եւ ինքզինք ցոյց չի տար իբր բժիշկ մը, որ ամենայն սառնասրտութեամբ կը նայի իրեն բերուածին: Յիսուսի վերաբերումը անդամալոյծին հանդէպ՝ քաջալերական է:

Ան կ'ըսէ. «Մեղքերդ ներուած են քեզի»:

Ի՞նչ կապ ունի հիւանդութիւնը մեղքերուն հետ:

Հին ժամանակներուն, հրեաներ մարդու մը բոլոր յաջողութիւնները կը վերագրէին իր հաւատքին, կամ Աստուծոյ քով իր գտած շնորհքին: Իսկ մարդու մը բոլոր ճախողութիւնները կը վերագրէին Աստուծոյ կողմէ անոր ընդունուած չըլլալուն: Կը հաւատային, թէ երբ Աստուած մարդու մը չի հաճիր՝ ապա զայն ճախողութիւններու կը մատնէ կամ կը պատժէ:

Արդեօք Յիսուս ալ նոյն մտայնութիւնը չի՞
յայտնէր իր խօսքով:

Ո՛չ: Յիսուսի խօսքը այդ մտայնութեան հետ
որեւէ աղերս չունի:

Յովհաննէսի աւետարանին մէջ կը նկարագրուի
ի ծնէ կոյրի մը բժշկութիւնը: Եւ երբ նախքան
բժշկութիւնը, աշակերտները հարցուցին Յիսուսի,
թէ որո՞ւն է մեղքը, որ այս մարդը կոյր ծնած է.
ի՞րն է, թէ իր հօրն ու մօրը:

Յիսուսի պատասխանը կ'ըլլայ, թէ մեղքը ոչ
անորն է եւ ոչ ալ անոր ծնողքինը: Եւ կ'աւելցնէ,
թէ ան կոյր ծնած է, «որպէսզի Աստուծոյ
զօրութիւնը յայտնի ըլլայ իրմով» (ՅՃ 9.2-3):
Այս պատասխանը մեզ կը լուսաբանէ, թէ բոլոր
հիւանդութիւնները կապ չունին մեղքին հետ:

Այս դրուագը կու գայ մեզի ըսելու նաեւ, թէ
որոշ պարագաներու՝ հիւանդութիւնը կապ ունի
մեղքին հետ: Մեղանչումները թէ՛ ընկերային
կեանքի մէջ եւ թէ՛ անհատական կեանքի մէջ,
իրենց ժխտական հետեւանքները կ'ունենան եւ
կը վնասեն հաւաքականութիւններու եւ մարդոց
առողջութեան:

Արդեօք ի՞նչ էր այս անդամալոյծին մեղքը:

Չէ՛ ըսուած. եւ ճիշդ չըլլար բան մը
երեւակայելը:

Երբ Յիսուս անդամալոյծին կ'ըսէ. «մեղքերդ
ներուած են», անմիջապէս Օրէնքի ուսուցիչները կը
մտածեն. «Այս մարդուն ըրածը հայհոյութիւն է»:

Եբրայական հասկացողութեան մէջ, մեղքերու
ներումը Աստուծոյ կը պատկանի: Միայն
Աստուած է, որ իրաւունքը ունի մեղքեր ներելու:
Հին Կտակարանին մէջ միայն մէկ հատիկ պա-
րագայ կայ, որ մարգարէական ներումի կ'արժա-
նանայ: Այդ ալ Դաւիթի գղջումին դիմաց
Նաթան մարգարէին պատասխանն է (Բ. Թգ
12.13): Սակայն ուշադիր, մարգարէն ինք չէ, որ
կը ներէ, այլ Աստուած է ներողը:

Յիշեցէք նաեւ այն բոլոր խօսքերը՝ որոնց մէջ
Յիսուս ներում արտայայտած է: Յիսուս երբեք
չէ ըսած, թէ Աստուած կը ներէ կամ Աստուած
ներեց: Օրինակ՝ երբ ներելու իշխանութիւնը կու
տայ իր աշակերտներուն, երբեք չըսեր՝ Աստուծոյ
կողմէ ձեզի ներելու իշխանութիւնը կու տամ,
այլ կ'ըսէ. «Առէ՛ք Ս. Հոգին. եթէ մէկուն ներէք
իւր մեղքերը՝ թող ներուած ըլլան եւ եթէ չներէք
մէկուն մեղքերը՝ թող ներուած չըլլան» (ՅՃ
20.22-23): Յիսուս ինքն է աղբիւրը ներումին,
ինք իշխանութիւնը ունի ներելու: Նոյնիսկ
աշակերտներուն ներումը՝ անոնց անձերէն
չէ, որ պիտի բխէր, այլ Ս. Հոգիէն, որ Յիսուսի
ներկայութիւնը պիտի բերէր աշակերտներու
կեանքին մէջ, ինչպէս նաեւ եկեղեցւոյ:

Յիսուսի ներելու իշխանութիւնը մէկ
բան կ'արտայայտէ. անոր աստուածային
հեղինակութիւնը:

Հայհոյութիւն բառը Աստուածաշունչին մէջ

անարգանք կամ արհամարհանք կը նշանակէ:
Օրէնքի ուսուցիչները ըսել կ'ուզէին, թէ Յիսուս
զԱստուած կ'անարգէ «մեղքերդ ներուած են»
ըսելով:

Ամէն խօսք կամ ամէն արարք, որ կը ձգտէր
Աստուծոյ իրաւունքը իւրացնել՝ հայհոյութիւն էր:
«Յիսուս գիտցաւ անոնց մտածումը»:

Յիսուս պէտք չունէր մարդոց խօսքի արտա-
յայտութիւնները լսելու, որպէսզի գիտնար, թէ
անոնք ի՞նչ կը խորհէին: Ան գիտէր մարդոց
մտածածը, կը տեսնէր անոնց մտածածը:
Յովհաննէս աւետարանիչ ըսած է, թէ Յիսուս
«պէտք չունէր ոեւէ մէկուն մասին ուրիշին
վկայութեան, քանի ինք գիտէր, թէ ի՞նչ կայ
մարդոց սիրտին մէջ» (ՅՃ 2.25):

Յիսուսի հարցումն է. «Ինչո՞ւ դուք ձեզի չար
բաներ կը մտածէք»: Ի՞նչ ըսել կ'ուզէր Յիսուս:
Արդեօք անոնք ի՞նչ չար բաներ կը մտածէին:
Օրէնքի ուսուցիչները կը խորհէին, թէ իրենք
Աստուծոյ իրաւունքը կը պաշտպանեն: Բայց
Յիսուս ըսել կ'ուզէր, թէ ինչ որ ես ըսի մեղքերու
ներման մասին, անիկա չէր չարը, այլ ձեր խորհածն
էր չարը: Անոնց խորհածը չար էր, որովհետեւ
պատճառ պիտի ըլլար Յիսուսի հանդէպ իրենց
հակադրութեան եւ անկէ անդին՝ ատելութեան,
որ պիտի յանգէր՝ զայն սպաննելու որոշումին:
Յիսուս կ'ուզէր անոնց անդրադարձնել տալ, թէ
իրենց ունեցած մտածումը չարիքի սերմ է, որուն
արդիւնքը սպանութեան խորհուրդի կրնայ
վերածուիլ:

Յիսուս ի՞նչ ձեռով կ'ապացուցէ, թէ ինք ներելու
իշխանութիւն ունի: Որեւէ ապացոյց կու տա՞յ:

Որպէս ապացոյց ներելու իր իշխանութեան՝
կը բժշկէ: Եւ կ'ուզէ որ այդ բժշկութիւնը ի՞նք
խօսի այն ճշմարտութեան մասին, թէ «Մարդու
Որդին երկրի վրայ իշխանութիւն ունի մեղքերը
ներելու»:

Յիսուսի ներումին եւ հրամանին վրայ՝
ելլելու, առնելու մահիճը եւ տունը երթալու՝
անդամալոյծը ոտքի կ'ելլէ եւ մահիճը առնելով
տուն կ'երթայ:

Ժողովուրդը որ այնտեղ էր, կը տեսնէ
կատարուած հրաշքը, կը զարմանայ եւ
զԱստուած կը փառաւորէ, «որ մարդոց այսպիսի
կարողութիւն կու տայ»: Այս նախադասութիւնը
աւետարանիչի՞ն միտքն է, թէ՛ ժողովուրդինն
է: Ժողովուրդին միտքն է անիկա: Հաւանաբար
աւետարանիչը արձանագրած է թելադրելու
համար, որ անդամալոյծին բժշկութեան վրայ
մարդիկ զինք տեսան իբր այնպիսի մէկը, որ
Աստուծոյ կողմէ զրկուած էր:

Ի՞նչ էր եղած այս անդամալոյծին մեղքը:

Դժուար է մեզի գիտնալ եւ ճիշդ չըլլար
երեւակայութեամբ տարուելով պատասխան մը
ճարելը:

(Շարունակելի 36)

ԵՐԵՍՆՕՐԵԱԿ

Երեքշաբթի, 09 Յոուսի 2009

19.00 Երիտասարդական՝
ներկայացում եւ զրոյց.

“Երդմնեցուցութիւն” (Exorcism)

Հրագրաբար, 11 Յոուսի 2009

11.00 Աղօթածողով՝

Քոյրերու ժողով

Հաքաթ, 13 Յոուսի 2009

Ս. Գրիգոր Լուսաւորձի Ելի Ի Վերադառնալ

10.00 Զոյքերու միօրեայ սեմինար՝

Ընտանեկան Միաւորը Սուրբ Է.

«Զոյքի Առաւել Մտերմութիւն»

Կրոնար, 14 Յոուսի 2009

Տօս Սուրբ Էջմիածնի

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Հրագրաբար, 18 Յոուսի 2009

11.00 Աղօթածողով՝

Քոյրերու ժողով

Կրոնար, 21 Յոուսի 2009

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Երեքշաբթի, 23 Յոուսի 2009

19.00 Ֆիլմի ցուցադրութիւն

“The Sea Inside”

Հրագրաբար, 25 Յոուսի 2009

11.00 Աղօթածողով՝

Քոյրերու ժողով

Հաքաթ, 27 Յոուսի 2009

Գրիգոր Նուարաթ

Կրոնար, 28 Յոուսի 2009

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Հրագրաբար, 02 Յոյրիս 2009

Ս. Սաւա Եւ Ս. Մեսրոպ

11.00 Աղօթածողով՝

Քոյրերու ժողով

Կրոնար, 05 Յոյրիս 2009

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Հրագրաբար, 09 Յոյրիս 2009

11.00 Աղօթածողով՝

Քոյրերու ժողով

Կրոնար, 12 Յոյրիս 2009

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ



Յընաջիւլ Կրօնար,
14 Յոուսի 2009-ին,

Ս. Էջմիածնի տօնի արձույթ
Ս. Պատարագի ընթացքին
դիտելու համար

Տօն. Վազան Սրբ. Գոյնուհան
նիւն՝
«Միածնի Էջը
Պատարագի արձույթ»:

Հոգեւանգստեան շեր
արջանագրութիւնները նախօր
կատարելու համար
եւեղեցիկ դիմանաձեռն

Սոյն թերթիւն եւ-նախապի ստանալու
համար շեր ե-հասցէն ուղարկեցէք
eglise58@sourphagop.com-ին

Հիմնադրութիւն Այնթապի
Բարեհաճեցէք հեռաձայնել Արժ. Տ.
Գառնիկ Քինյ. Գոյնուհանի.
514 331 5445 x203 կամ 514 909 5203

Նախորդ թիւերը կրնաք գտնել
www.sourphagop.org/lradou
կայքէջին վրայ